ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լևոն Մկրտչյանի՝ ս.թ. հունվարի 22-24-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. <u>Անունը, Ազգանունը՝</u>

Լևոն Մկրտչյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

ՀՀ կրթության և գիտության նախարար

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները՝</u>

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն), 2018 թվականի հունվարի 22-24-ը:

4. <u>Հրավիրող կողմը՝</u>

Միացյալ Թագավորության կրթության պետքարտուղար

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝</u>

Մասնակցություն Կրթության համաշխարհային համաժողովին:

6. <u>Քննարկված թեմաները՝</u>

Համաժողովի ընթացքում տարբեր երկրների կրթության նախարարներ քննարկել են համաշխարհային սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում կրթության որակի բարելավման հիմնահարցերը:

Քննարկվել են նաև կրթության զարգացման ուղղություններն ու մեթոդները, կրթության ոլորտի նոր մարտահրավերները, ստեղծարար մարդ դաստիարակող կրթական համակարգի անհրաժեշտության հետ առնչվող հարցերը, ներկայացվել են լուծումների առաջարկությունները: Ներկայացվել են մասնակից երկրների կրթական համակարգերի առկա վիճակը և զարգացման ռազմավարությունները:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝</u>

Համաժողովի ընթացքում պաշտոնական հանդիպումներ եմ ունեցել Բրիտանական խորհրդի ներկայացուցիչների հետ: Քննարկման առանցքում են եղել ուսուցիչների վերապատրաստման գործընթացում առաջավոր փորձն ու մոտեցումները, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից հնարավորությունները կրթության ոլորտում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Բրիտանական խորհրդի աջակցությամբ Հայաստանում կազմակերպել խորհրդաժողով:

Համաշխարհային բանկի նախաձեռնությամբ՝ Հայաստանում իրականացվող ծրագրերը և հեռանկարները քննարկելու նպատակով, հանդիպում եմ ունեցել ՀԲ-ի կրթության գլխավոր տնօրեն Ջայմե Սաավեդրայի հետ: Քննարկման արդյունքում Ջ.Սաավեդրան հայտնեց ՀԲ-ի պատրաստակամությունն աջակցելու և մասնակցելու ՀՀ կրթության ոլորտում իրականացվող ԵՄ աջակցության ծրագրերին:

Վրաստանի կրթության և գիտության նախարար Միխայիլ Չխենկելիի հետ հանդիպման ընթացքում քննարկել են կրթական համագործակցության հետ կապված մի շարք հարցեր, մասնավորապես՝ երկու երկրների բարձրագույն կրթության ոլորտի ծրագրերի և մասնագիտական կրթության բնագավառում համագործակցության ընդլայնման մասին:

Երկկողմ համագործակցության հարցեր են քննարկել նաև Չեռնոգորիայի և Ուկրաինայի կրթության և գիտության ոլորտների ղեկավարների հետ: Չեռնոգորիայի նախարար Դամիր Սեովիչի հետ հանդիպման ընթացքում կարևորվել են հանրակրթության ոլորտի, մասնավորապես՝ ուսուցիչների վերապատրաստման համակարգի զարգացման միտումները և իմ կողմից նշվել է, որ Հայաստանում ներկայումս իրականացվում է ուսուցիչների վերապատրաստման և կարողությունների հզորացման համակարգի վերափոխում և այդ առումով միջազգային հաջողված փորձը մեր երկրի համար հետաքրքիր է:

Ուկրաինայի կրթության և գիտության նախարար Լիլյա Գրինևիչին հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրոպական Միության «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակում երկկողմ համագործակցության զարգացման հնարավորությունները: Անդրադարձ է եղել Արևելյան գործընկերության անդամ երկրների համար «Հորիզոն 2020»-ի կողմից սահմանված մրցութային արտոնյալ պայմաններին: Այս համատեքստում առաջարկել եմ գործնական քայլեր ձեռնարկել համատեղ գիտական դրամաշնորհների հայտեր ներկայացնելու և միասնական աշխատանքային խմբեր ձևավորելու ուղղությամբ:

8. <u>Գործուղվող՝</u>

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան